


ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ԲՆԻԿՆԵՐԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)**



Այս բոլոր նախապատրաստական աշխատութիւններից յետոյ անցնենք թուել այն փոխառութիւնները՝ որ հայերէն լեզուն կատարել է կովկասեան լեզուներից։ Այստեղ գնում ենք նախ հիւսիսային կով-

կասեան փոխառութիւնները, յետոյ վրացական անծանօթ լեզուից փոխառութիւնները, երրորդ՝ զուտ վրացական փոխառութիւնները։

Ա. ՀԵՐԱԿՈՅԻՆ ԿԱՋԻՄՈՒՄՆ ՔԵՒԱՆՆԵՐ

- | | |
|------------------|------------------|
| 1. աթուր «ոտք» | 8. կարաս |
| 2. արջն «սեւ» | 9. կարասի |
| 3. արջասպ | 10. հաճար |
| 4. աք «ոտք» | 11. ձայղ «ցելու» |
| 5. բոկեղ «հացիկ» | 12. մոծակ |
| 6. եղ «մէկ» | 13. ուղիս |
| 7. խոտ | |

Բ. ՀԱՐԱԿՈՅԻՆ ԿԱՋԻՄՈՒՄՆ ՔԵՒԱՆՆԵՐ

- | | |
|------------------------|------------------|
| 1. աղբ | 2. անթեղ «մոխիլ» |
| 3. բակ | 4. բող |
| 5. գաւառ | 6. գղա՞կ |
| 7. զովաղ «ընկեր» | 8. լակոտ |
| 9. խամուր, խամրիլ | 10. խծուծ |
| 11. խոխոմ | 12. խոճկոր |
| 13. խում, խմել | 14. խոփ |
| 15. խոռվ | 16. ծանր |
| 17. ծիր, ծրել | 18. ծիւ «աթար» |
| 19. ծիւրիլ | 20. ծուխ |
| 21. ծուծ, ծծել | 22. կոճան «խող» |
| 23. կուռ, կռել, կռան | 24. հոռի |
| 25. ճակ «էղ ձի» | 26. ճաղ |
| 27. ճաղաղ «անտառ» | 28. ճանճ |
| 29. ճիպո | 30. ճկոյթ |
| 31. ճողոպուրտ «ընկոյզ» | 32. մակ «վրայ» |
| 33. մշակ | 34. նժար |
| 35. չլան «մոխիլ» | 36. չլուաբարոյ |
| 37. չմորիլ | 38. ոչխար |

(*) Հարունակութիւն՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Ճայ Լեզուի» գործեն (Ըս. Գլուխ)։

- | | | | |
|-----|--------------|-----|------------------------------|
| 39. | ունջ «գանձ» | 40. | չանչ |
| 41. | պոլոճ | 42. | ջախել, ջախջախել ^o |
| | | — | սահմի |
| 43. | վաղ, վաղիւ | 44. | տաղախ |
| 45. | տող | 46. | ցմախ «բոյս է» |
| 47. | փառ | 48. | փարախ |
| 49. | փշբել, փշուր | 50. | փխրել, փռիսր |

Դ. Վ. Ա. Բայրեթինից յերբն դեկտեմբեր

- | | | | |
|-----|---------------------------|-----|-------------------------|
| 1. | Արտալայ «տավարի ազդը» | 2. | բալախ «փշախոտ» |
| 3. | բալղին «մլուկ» | 4. | բաղբակ «բոյսը» |
| 5. | բանդակ «ռուպ» | 6. | բոչոյ «փոքր ձի» |
| 7. | գմիր «ռւժեղ» | 8. | գութան |
| 9. | գուլայ «սիրտ» | 10. | գգավիխալ «թագուհի վրաց» |
| 11. | գէղէպուլ «վրացի այնվական» | 12. | երիսթավ «իշխան վրաց» |
| 13. | թոկ «չուան» | 14. | թոշ «սառոյցի կտոր» |
| 15. | խազ «գիծ» | 16. | խատ «զարդանկար |
| 17. | խարբ «աղահ» | 18. | խիզան «պանդուխտ» |
| 19. | խորբալ «ցորեն» | 20. | խտիտ «գիրկ» |
| 21. | ձս | 22. | ծիգնաւպար «գիւանաղպիր» |
| 23. | ծինամծոր «մի պաշտօնեայ» | 24. | ծիտ |
| 25. | ծմել «սպանախ» | 26. | ծօ, ծօլա |
| 27. | կէդ «մահակ» | 28. | կինճ «մանր քար» |
| 29. | կիտր «վարունգ» | 30. | կոծոխուր «ծոր» |
| 31. | ճիլ «սէզ» | 32. | ճլել «նիհարութիւն» |
| 33. | ճղավաղիտել | 34. | ճոն «մուշտակ կարող» |
| 35. | Մամթաւար «պաշտօնեայ» | 36. | Մամփուղ «իշխան» |
| 37. | մաշիկ «կօշիկ» | 38. | մարմաշ «բարակ կտաւ» |
| 39. | չէթ «խենթ» | 40. | չուատ «պանրի շիճուկ» |
| 41. | չքրիկ «սուրհանդակ» | 42. | չեչ |
| 43. | չիտ «ճնճղուկ» | 44. | ջոխ, «բիր» |
| 45. | սոմար «չափ է» | 46. | տիսիլ «կաղին» |
| 47. | տուտ «ճիւղ» | 48. | փիճի |
| 49. | փոցիս | 50. | քալա «այ աղջիկ» |
| 51. | քած | 52. | քշիկել «սաստել» |

Ահա այն բոլոր փոխառութիւնները, որ մեր կարծիքով հայերէն լեզուն կարող էր կնքած լինել հիւսիսային և հարաւային կովկասեան լեզուներից. 13 բառ առաջին խմբից, 50 բառ երկրորդ խմբից և 52 բառ վրացերէնից ուշ ժամանակի փոխառութիւններ, ընդամենը 115 բառ :

Երբ մի ընդհանուր ակնարկ զցենք այս բոլոր փոխառութիւնների վրայ, կը տեսնենք որ գրանցից շատ քչերն են ներկայացնում որեւէ կուլտուրական արժէք: Զհաշուելով երկրագործական ու գիւղատընտեսական բառերը (գութան, մշակ, ոչ-

խար, փարախ, խծուծ, խոփ, հաճար, կոճան, ճակ, ճզոպուր, բակ, կարաս), իրեւ զուտ կուլտուրական արժէք ունեցող բառեր կարող ենք յիշել միայն արջասպ, կոել, կոան, գգակ, նժար, բայց յատկապէս հոռի և սահմի բառերը. մնացեալ ամբողջ բառերը ներկայացնում են սովորական կեանքի հասարակ բաներ. ինչպէս՝ աղբ, անթեղ, լակոտ, ճանճ, ճիպը, ծիւ, ևն. ևն: Բայց այսպէս չեն լինում ազգից ազգ և լեզուից լեզու եղած փոխառութիւնները: Երբ մի ազգ մի ուրիշ ազգի լեզուից բառեր է փոխ առնում,

առնում է այնպիսի բառեր, որոնք իր կուլտուրական կեանքի որեւէ պահանջը լրացնէին։ Հայերէնը բազմաթիւ փոխառութիւններ ունի յունարէնից, բայց դրանք բոլորը կրօնական, գրական կամ գիտական տերմիններ են։ Հայերէնը բազմաթիւ փոխառութիւններ ունի պարսկերէնից, բայց այդ բոլորը պետական կազմակերպութեան, վարչական աստիճանների և գիտութեան վերաբերեալ տերմիններ են։ Այսօր էլ հայերէնը ոռուսերէնից եւ երրորդական լեզուներից զանազան բառեր է փոխ առնում, բայց բոլորն էլ ներկայացնում են որեւէ քաղաքակրթական կողմ։ Փոխ ենք առնում զավինական ու սուխարին, բայց ոչ թէ հասարակ կոճակը և հացը. որովհետեւ առաջինները կուլտուրական նորութիւններ են մեր կեանքի համար, իսկ երկրորդները մեզ վաղուց յայտնի սովորական իրեր։

Երբ մի ազգ կամ ժողովուրդ մի ուրիշ ազգի լեզուից փոխ է առնում սովորական կեանքի վերաբերեալ բազմաթիւ բառեր, դա արդիւնք է երկու բանի. կամ այն որ փոխառու ժողովուրդը ամբողջապէս ենթարկուած է փոխառուի ազգեցութեան (պետական, կուլտուրական ևն.), և կամ այն որ փոխառու լեզուն իր մէջ ունի մի ուրիշ ձուլուած տարրի կամ ազգութեան լեզուն։ Սուաջին դէպքի համար իր օրինակ կարող են ծառայել հայերը Պոլսում կամ Նոր-Նախիջեւանում։ Հայերէնը Պոլսում, իսկապէս ռամիկ կամ ժողովուրդական հայերէնը, հազարաւոր փոխառութիւններ ունի թուրքերէնից, փոխառութիւններ՝ որոնք պատկանում են բոլորովին սովորական կեանքին։ ինչպէս՝ սիւտ «կաթ», եօղուրտ «մածուն», իւզիւմ «խալուղ», արմուտ «տանձ», պուլուտ «ամպ» ևն. ևն։ Այս փոխառութիւնները իրաւացի են, որովհետեւ Պոլսի հայերը, մանաւանդ կին ժամանակ, ամբողջապէս ենթարկուած էին տաճիկ պետութեան, իրեւ նուաճուած և սուրադրեալ տարր։ Նոյնպէս հայերէնը Նոր-Նախիջեւանում հազարաւոր փոխառութիւններ ունի ոուսերէնից, սովորական կեանքի վերաբերեալ։ ինչպէս՝ քուխնի «խոհանոց», սփոռ «վէճ», պէլյո «ճերմակեղէն», փաթալոկ «ճեղուն» ևն. ևն։ Այսպիսի փոխառութիւններն էլ իրաւացի

են, որովհետեւ հայերը Նոր-Նախիջեւանում կլանուած են ամբողջապէս ոռուական տիրապետութեամբ, քաղաքակրթութեամբ ու գրականութեամբ։

Երկրորդ դէպքի համար իրը օրինակ կարող է ծառայել Փոքր-Ասիոյ, յատկապէս կեսարիոյ, Եոզդատի եւ Ատանայի թուրքերէնը, որ ունի սովորական և հասարակ կեանքի վերաբերեալ բազմաթիւ փոխառութիւններ հայերէնից, մինչև 200 հատ։ Այս փոխառութիւններն էլ ունին իրենց պատճառը. այդ այն է՝ որ հայերը Փոքր Ասիայում կորցնելով հայերէն լեզուն, ընդունել են թուրքերէնը իրեւ մայրենի լեզու և իրենց հին լեզուից իրենց հետ են տարել զանազան բառեր, որոնք և մտել են ընդհանուր գործածութեան և նոյն իսկ թուրքերի լեզուի մէջ։ Այս գեռայդ պարագան է, երբ ձուլուած ժողովուրդը միայն լեզուվ և պետականորէն է ձուլուած, ու գեռ կրօնապէս և ազգային տեսակէտով պահում է իր անկախ գոյութիւնը։ Իսկ երբ ձուլումը կատարեալ լինէր, խտրութիւնն էլ բոլորովին պիտի վերաբար։ Այսպիսի օրինակներ տալիս է մեզ հնդկերէնը՝ որ ձուլել է իր մէջ՝ Հնդկաստանի զանազան բնիկներին, յունարէնը՝ որ ձուլել է իր մէջ՝ Յունաստանի նախարարիկներին, լատիներէնը՝ որ ֆրանսիայում ձուլել է իր մէջ կելտական ժողովուրդն ու լեզուն ևն. այս բոլոր դէպքերումն էլ ձուլող լեզուն ձուլուած լեզուից իրեւ ժառանգութիւն է ստացել սովորական կեանքի վերաբերեալ զանազան բառեր։

Երկու դէպքերը հեշտութեամբ կարելի է զանազանել իրարից նրանով՝ որ առաջին դէպքում փոխառութիւնները շատ բազմաթիւ են և սովորական ու հասարակ փոխառութիւնների հետ, միաժամանակ և անպատճառ կան նաև կուլտուրական արժեք ունեցող բազմաթիւ բառեր։ Իսկ երկրորդ դէպքում փոխառութիւնները շատ մեծ թիւ չեն կազմում և միայն պատկանում են սովորական կեանքին։

Այժմ այս գատողութեանց համեմատ քննելով մեր կովկասեան փոխառութիւնները, պիտի տեսնենք որ նրանք ներկայացնում են վերայիշեալ երկրորդ պարագան։ Հայերէնը փոխառութիւններ է կնքել կովկասեան լեզուներից ոչ թէ նրա համար,

որ Կովկասեան ժաղովուրդները կուլտուրապէս բարձր էին և հայերը ենթարկուած էին նրանց ազգեցութեան, այլ որովհեան հայերի մէջ ձուլուել էին զանազան կովկասեան մանր ցեղեր, որոնք իրենց հետ բերին նաև իրենց էին մայրենի լեզուի հետքերը: Այդպիսի ազգութիւններ էին հիւսիսարեւելքից Ռւտէացիք և Աղուանները, որոնք բերին մեզ հիւսիսային կովկասեան լեզուախմբի պատկանող բառեր, և հիւսիսարեւմուտքից Դուգարացիք և Տայեցիք, որոնք բերին իրենց հետ հարաւային կովկասեան լեզուախմբին պատկանող բառեր: Պատմութիւնը և հնագիտութիւնը հաստատում են, որ այդ ժողովուրդները, ինչպէս և ամբողջ կովկասեան ազգութիւնները, էին ժամանակ էլ ոչ միայն նշանաւոր քաղաքակրթութեան հասած չէին, այլև զուրկ էին հասարակ գրութեան արուեստից, ինչպէս մինչև այսօր էլ են այդ ազգութիւններից շատերը: Բոլորովին այլ է Խաղիների հարցը, որ լինելով հասած մեծ կուլտուրական աստիճանի, ինչպէս ցոյց են տալիս իրենց թողած հոյակապ շինութիւնները և բեւեսագրական արուեստը, տուին հայ լեզուին ամէն կարգի փոխառութիւններ՝ նախ իրենց կուլտուրայի պատճառով և երկրորդ՝ իրեւ նուաճուած կամ հայերի հետ ձուլուած ժողովուրդ: Խաղիները պատկանում են վերեւում նկարագրած մեր կրկին զէպքերից հենց երկուսին էլ: Հայերի և խաղիների համեմատութիւնը այն է՝ ինչ որ թուրքերի և պարսիկներինը Ատրպատականում, առաջինները անքառաքակիրթ նուաճողի գերում, երկրորդները քաղաքակիրթ նուաճեալի գերում: աւելի յետոյ երկու տարրերը ձուլուած իրար հետառաջինի ազգացին անոււան տակ և երկրորդի կուլտուրայի ազգեցութեամբ:

Այստեղ կարեւոր է յիշել մի վերջին հանգամանք:

Թէև մեզ իսպառ անծանօթ են Խալդիների և կովկասեան ազգութիւնների ցեղակցական ու լեզուական յարաբերութիւնները, բայց անկարելի է ընդունել որ նըրանց բազմադարեան հարեւանութիւնը ազգած լինի միմեանց լեզուի վրայ: զանազան կողմերից անշուշտ եղել են փոխառութիւններ, այսպէս հիւսիսային կովկասեաններից փոխառութիւններ անցած կը

լինին անշուշտ հարաւայիններին և փոխառութաբարը. նոյնպէս Խալդիների լեզուից զանազան փոխառութիւններ անցած կը լինին թէ հիւսիսային և թէ հարաւային կովկասեաններին և փոխադարձաբարը: Այսպէս օրինակ, մենք զիտենք որ մօակ բառը գտնուում է թէ հիւսիսային և թէ հարաւային կովկասեանների մէջ, ուստի անշուշտ մի փոխառու կողմ կայ: Եթէ այդպէս է, ուրեմն մեր 63 կովկասեան փոխառութիւնների գոնէ մի մասը կարող է մեզ հասած լինել անուղղակի ճանապարհով. այսինքն կովկասեաններից անցած նախ Խալդիներին և Խալդիներից էլ անցած հայերէնի՝ իրեւ Խալդիական բառ. — կամ կարող է նաև ընդհակառակը՝ Խալդիրէն մի բառ անցած լինել կովկասեաններին և յետոյ նրանցից անցած հայերէնի. — և կամ վերջապէս Խալդիրէն մի բառ մի կողմից անցած լինել կովկասեաններին և միւս կողմից հայերին, այնպէս որ այսօր հայերէնն ու կովկասեանները իրար նման են դուրս գալիս, մինչդեռ իրապէս կապ չկայ նրանց մէջ և կովկասեան փոխառութիւն համարուած այդ բառերը իսկի կովկասեան էլ չեն, այլ Խալդիական: Այս վերջին ենթադրութիւնը երբեմն ակներեւ է դառնում. օրինակ՝ հայերէն գալատոս «որմնագիր» հազուագիւտ բառը, որ բնաւ հայերէն բառի կերպարանք չունի, կայ նաև վրացերէնի մէջ զալատողի, կալատողի ձեւով և թուշերէնի մէջ կալտազ ձեւով: Արգ՝ այս բառը, ինչպէս հայկական չի երեւում, նոյնպէս ընդհանուր վրացական էլ չէ և վրացական արմատներով էլ չի մեկնուում. ուստի հաւանական է որ Խալդիրէն լինի և շինարար Խալդիներից անցած լինի թէ Հայերին և թէ Վրացոց: Նոյն պէս հայերէն ծորել «հոսիլ, քամուիլ» բառը՝ որ միաժամանակ կայ Ռւտէացոց մէջ ծորեսուն և Վրաց մէջ ծուրվա ձեւով, բայց չի գտնուում ոչ մի ուրիշ կովկասեան լեզուի մէջ, հաւանաբար Խալդիական է: Կարելի է կարծել որ յատկապէս կուլտուրական արժէք ներկայացնող փոխառութիւնները, որ մենք մինչեւ այժմ կովկասեան էինք համարում, իրապէս Խալդիրէն բառեր են թէ հայերէնի և թէ կովկասեան լեզուների մէջ թափանցած:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ